# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

## Գուգարք համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Գուգարք** | Ավագանու հերթական նիստ | 12.01.2021թ. | 11:00 | **Գուգարքի** համայնքապետարանի (գյ.Գուգարք, փող.6, շ. 47) |

# ՕՐԱԿԱՐԳ

Գուգարք համայնքի ավագանու 2021թվականի 1-ին (արտահերթ նիստի)

12.01.2021

Գուգարք, համայնքապետարան ժամը 11:00

1. Գուգարք համայնքի ավագանու 2021 թվականի 1-ին՝ արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին. զեկ.՝ աշխ.քարտ. Հ.Սարգսյան

2. Գուգարք համայնքի 2020թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման հաշվետվություն. զեկ.՝ համայնքի ղեկավար Ա.Աշուղյան

3. Գուգարքի համայնքապետարանի և ենթակա հիմնարկների հաստիքացուցակներում փոփոխություն կատարելու մասին. զեկ.՝ համ. ղեկ. Ա.Աշուղյան

4. Գուգարք համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.զեկ.՝ համայնքի ղեկավար Ա.Աշուղյան

5. Ընթացիկ հարցեր.

**ՆԱԽԱԳԻԾ 01**

---

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ*

*Հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 14 հոդվածի 6 կետը՝*

Հաստատել Գուգարք համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 12-ի թիվ01 նիստի ներկայացված օրակարգը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**

ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ,ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԵՆԹԱԿԱ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ՝ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ, ԳՐԱԴԱՐԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ, ,,ԳՈՒԳԱՐՔԻ ՇԻՐՄԱՏՈՒՆ,, ՀԻՄՆԱՐԿ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. *ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ*

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հա նրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 11 և 28 կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30,33, 37 հոդվածներով՝*

1. Հաստատել Գուգարքի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ըստ Հավելված 1-ի:

2.Հաստատել Գուգարքի համայնքապետարանին ենթակա հիմնարկների՝ մարզադպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան, ,,Գուգարքի շիրմատուն,, հիմնարկ, աշխատակազմերի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ ըստ 1-5 հավելվածների:

2Ուժը կորցրած ճանաչել Գուգարք համայնքի ավագանու 2020թվականի նոյեմբերի 27-ի N 55՝,,Գուգարքի համայնքապետարանի քաղաքական,

հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, որոշումը և Գուգարք համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 18-ի N 64`,,Գուգարքի համայնքապետարանին ենթակա հիմնարկների՝ մարզադպրոց, մանկապարտեզ, գրադարան, Մշակույթի տուն, ,,Գուգարքի շիրմատուն,, հիմնարկ, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**

**ՆԱԽԱԳԻԾ 03-Ն**

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
,,ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,,
N 67-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5 կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝*

Գուգարք համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 18-ի «Գուգարք համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին » N 67-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**